Արձանագրություն N 2
Протокол N 2

«ԵՔ-ԲՄԱՊՁԲ-21/9» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի արտահերթ նիստի
Внеочередное заседание оценочной комиссии под кодом «EQ-BMAPDzB-21/9»

ք. Երևան 04.03.2021թ.
Ժամը 16:00
г. Ереван 04.03.2021г.
16:00ч.

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Գ. Աղաբեկյանը
Հանձնաժողովի անդամներ՝ Ա. Աղաբեկյանը, Հ. Ռամազյանը, Ա. Գևորգյանը,
Բացակայում է՝ Ս. Մանուչարյանը
Հանձնաժողովի քարտուղար՝ Գ. Մուրադյանը

Участвовали
Председатель комиссии Г. Агабекян
Члены комисии, А. Агабекян, У. Рамазян, А. Геворкян
Отсутствует, С. Манучарян
Секретарь комисии Г. Мурадян

1. **«ԵՔ-ԲՄԱՊՁԲ-21/9» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում 03.03.2021 թվականին ներկայացված հարցումներին պարզաբանումներ տրամադրելու վերաբերյալ**
Ответы на разъяснения по запросам поданного 03.03.2021 года в рамках закупочной процедуры под кодом «EQ-BMAPDzB-21/9»

(Գ. Աղաբեկյան
Г. Агабекян)

Պարզաբանման պահանջի տեքստ 1
Текст запроса для разъяснения

Հարցումը ներկայացվել է PDF ֆայլով, որը կցվում սույն պարզաբանմանը

Պարզաբանում տրամադրելու տեքստ. 1
Текст разъяснения

1-ին հարցի վերաբերյալ հայտնում ենք, որ կողային բռնակների՝ մետաղական պտուտակներով ամրացված լինելը ընդունելի է:

2-րդ հարցի վերաբերյալ հայտնում ենք, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 486-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ այն դեպքում, երբ առուվաճառքի պայմանագրով նախատեսվում է վաճառողի պարտականությունը՝ տրամադրելու ապրանքի որակի երաշխիք, վաճառողը պարտավոր է գնորդին հանձնել այնպիսի ապրանք, որը պայմանագրով սահմանված որոշակի ժամանակահատվածում (երաշխիքային ժամկետ) պետք է համապատասխանի ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 485 հոդվածի պահանջներին:

Պարզաբանման պահանջի տեքստ 2
Текст запроса для разъяснения

Հարցումը ներկայացվել է PDF ֆայլով, որը կցվում սույն պարզաբանմանը

Պարզաբանում տրամադրելու տեքստ. 2
Текст разъяснения

1-ին հարցի վերաբերյալ հայտնում ենք, որ մրցույթի տեխնիկական բնութագրով սահմանվել է որ.

«Աղբարկղը պետք է լինի.

- Կայուն և պաշտպանված ուլտրա-մանուշակագույն ճառագայթներից.
- դիմացկուն և պաշտպանված ցրտի, տաքի և ջերմաստիճանային տատանումներինց.
- ...

տրված EN 840, RAL-GZ և ISO 9001 սերտիֆիկատներին համապատասխան:»

ինչպես նաև.

«Առաջարկվող ապրանքները պետք է ունենան EN 840, RAL-GZ և ISO 9001 սերտիֆիկատներ:»

Այսինքն, եթե առաջարկվող ապրանքը արտադրվել է վերոհիշյալ ստանդարտներին համապատասխանան և վերոհիշյալ սերտիֆիկատները տրվել են առաջարկվող ապրանքի համար, հետևաբար այն ներառում է նաև Ձեր կողմից մատնանշված չափանիշները:

Մրցույթի տեխնիկական բնութագրով սահմանվել է որ.

«Վաճառողը մինչև Ապրանքը հանձնելը, Պատվիրատուի պատահական ընտրությամբ ոչ պակաս 4 հատ ապրանքանմուշ իր միջոցների հաշվին պետք է ենթարկի ՀՀ պետական փորձաքննության և Պատվիրատուին ներկայացնի փորձագիտական եզրակացություն՝ առաջարկվող ապրանքը վերոհիշյալ տեխնիկական բնութագրին համապատասխանության վերաբերյալ:

Սույն կետով նշված ՀՀ պետական փորձաքննություն չիրականացնելը, կամ առաջարկվող ապրանքը վերոհիշյալ տեխնիկական բնութագրին համապատասխանության վերաբերյալ եզրակացությունը Պատվիրատուին չտրամադրելը, կամ եթե տրամադրված եզրակացությամբ արձանագրվել է անհամապատասխանություն վերոհիշյալ տեխնիկական բնութագրին, ապա Պատվիրատուն իրավունք ունի հրաժարվել ապրանքից:»

Այսինքն, Մասնակիցը իր կողմից առաջարկվող ապրանքից, Պատվիրատուի պատահական ընտրությամբ ոչ պակաս քան 4 հատ ապրանքանմուշ, իր միջոցների հաշվին պետք է ենթարկի փորձաքննություն իրականացնող ՀՀ-ում գործող պետական մասնագիտացված որևէ կառույցի փորձաքննության՝ մրցույթի տեխնիկական բնութագրին համապատասխանության վերաբերյալ եզրակացություն ստանալու նպատակով, վերջինիս տեխնիկական հնարավորությունների և հագեցվածության շրջանակներում, որը պետք է արտացոլվի նաև տրված եզրակացության մեջ:

2-րդ հարցի վերաբերյալ հայտնում ենք, որ Մրցույթի տեխնիկական բնութագրով որպես մատակարարման հասցե է սահմանվել Երևանի քաղաքապետարանի վարչական շենքի հասցեն, բնականաբար ելնելով ապրանքի ծավալից չի բացառվում, որ պայմանագրի կողմ հանդիսացող Մասնակցին առաջարկվի ապրանքի որոշ մասը բեռնաթափել նաև Երևանի քաղաքապետարանի ենթակայության մեկ այլ տարածքում:

3-րդ և 4-րդ հարցերի վերաբերյալ հայտնում ենք, որ կողմերի պայմանագրային պարտավորությունները, այդ թվում նաև անհաղթահարելի ուժի ազդեցության վերաբերյալ

դրույթը սահմանված են մրցույթի պայմանագրի նախագծով, ինչպես նաև ՀՀ քաղաքացիական օրենսգրքով:
Միաժամանակ տեղեկացնում ենք, որ Օրենսգրքի 417-րդ հոդվածի.2-րդ մասի համաձայն՝ մեղքի բացակայությունն ապացուցում է պարտավորությունը խախտած անձը, իսկ 3-րդ մասի համաձայն՝ ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելիս պարտավորությունը չկատարած կամ անպատշաճ կատարած անձը պատասխանատվություն է կրում, եթե չապացուցի, որ պատշաճ կատարումն անհնար է եղել անհաղթահարելի ուժի, այսինքն՝ տվյալ պայմաններում արտակարգ և անկանխելի հանգամանքների հետևանքով, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով: Նման հանգամանքներ չեն, մասնավորապես, պարտականությունների խախտումը պարտապանի կոնտրագենտների կողմից, շուկայում անհրաժեշտ ապրանքների կամ պարտապանի մոտ անհրաժեշտ դրամական միջոցների բացակայությունը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ 0:
Принято решение: за - 4, против - 0.

Նիստին ներկա հանձնաժողովի անդամների անունները և ազգանունները.
Имена и фамилии членов комиссии, присутствующих на заседании.

Հանձնաժողովի Комиссии		
Նախագահ՝ Председатель		Գ. Աղաբեկյան Г. Агабекян
Անդամներ՝ Члены		Ա. Աղաբեկյան А. Агабекян
		Հ. Ռամազյան У. Рамазян
		Ա. Գևորգյան А. Геворкян
Քարտուղար՝ Секретарь		Գ. Մուրադյան Г. Мурадян